

## Հայ գրականություն

### IX դասարան

1.Տրված հատվածը եղիշե Չարենցի «Դեպի լյառն Մասիս» պոեմից Է. պոեմը նվիրված է Հայաստանի վերջի երգիչ, անմահ քանաքեռցի, հայ մեծ գրող և լուսավորիչ Խաչատուր Աբովյանին: Պոեմում պատկերված է Աբովյանի կյանքի վերջին գիշերվա դրամատիկ պահը: Նա դուրս է ելնում, հայացքն ուղղում դեպի լյառն Մասիս և ձուլվում Մասսի հավերժությանը՝ «Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ»: Աբովյանի անմոռանալի դասերից են՝ «Մեկ ազգի պահողը, իրար հետ միացնողը լեզուն ա ու հավատը», « Ձե՛զ եմ, ձե՛զ, հայոց նորահաս երիտասարդք, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին ղուրբա՛ն. Տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք», «Հայկ, Վարդան, Տրդատ, Լուսավորիչ՝ քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրանց որդին եմ. Եվրոպա թե Ասիա՝ ինձ անդադար ձեռն էին տալիս, թե Հայկա զավակն եմ ես, Նոյան թոռը, Էջմիածնա որդին, դրախտի բնակիչը»: Ես խոստանում եմ միշտ հավատարիմ մնալ մեծ մանկավարժի պատվիրաններին. Ես երբեք չեմ փնտրելու Աբովյանի գերեզմանը, որովհետև այն մեր ժողովրդի սրտում է, մեր ժողովրդի հավերժական երթում, Մաշտոցի, Խորենացու ու Նարեկացու անունների շարքում:

2. Ազատություն,- գոչեցի,-  
Թող որոտա իմ գլխին  
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,  
Թող դավ դնե թշնամին,  
Ես մինչ ի մահ, կախաղան,  
Մինչև անարգ մահու սյուն  
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ  
Անդադար, ազատություն:

Նալբանդյանի «Ազատություն» բանաստեղծությունը քնարական բանաստեղծություն է, քանի որ գրված է հեղինակի անունից, բայց արտահայտում է յուրաքանչյուրիս հույզերն ու մտքերը, ցանկությունն ու կամքը: Քնարական բանաստեղծության մեջ նույնանում են հեղինակն ու քնարական հերոսը:

Փոխաբերական են կայծակը, հուրը, երկաթը. Այս երևույթները խորհրդանշում են բռնությունը, հալածանքները. Ազատությունը ոչ միայն մարդու բնական, անկապտելի իրավունքն է, այլև բնության ու տիեզերքի հավերժական ձգտում: Ազատության զինվորը միշտ էլ դատապարտված է հալածանքների ու անազատության, եթե իշխում են բռնությունն ու ստրկամտությունը: Ինչպես բնության ավերիչ արհավիրքից հետո փայլում է պայծառ արևը, և աշխարհը նորից կյանք է առնում, այնպես էլ ազատության

զինվորի պայքարն է ի վերջո պսակվում հաջողությամբ: Մենք ապրում ենք՝ հետևելով ազատության երգչի պատգամներին:

3. Հայ ժողովուրդը իր պատմության ընթացքում ունեցել է խորհրդանիշ սրբություններ, որոնք դարձել են նրա ուղեկիցներն ու անկողոպտելի գանձը: Այդպիսի խորհրդանիշ սրբություն է Արաքս գետը, որին ժողովուրդը քնքշանքով «մայր» է անվանել: Նրան է պատմել իր վշտերը, նրան է ապավինել իր կյանքի ամենածանր պահերին: Հայ ժողովրդի տաղանդավոր զավակներից մեկը՝ Գամառ-Քաթիպան(նույն ինքը՝ Ռափայել Պատկանյանը), ում բանաստեղծական ներշնչումների կիզակետը միշտ եղել է հայրենիքը՝ իր անցյալով, ներկայով և գալիքի երազանքներով, նույնպես դիմել է մայր գետին՝ նրանից ակնկալելով իր ժողովրդի փրկության դեղատոմսը: Բանաստեղծությունը գրված է անձնավորման հնարանքով, որը մարդկային հատկանիշներ է վերագրում մայր գետին: Խիզախ պատանին ցանկանում է իմանալ Արաքսի պղտոր ու լալագին լինելու, ձկների հետ պար չբռնելու և արցունքոտ աչքերով հարազատ ափերից փախչելու պատճառը: Եվ սգավոր այրի գետը «խիզախ, անմիտ պատանուն» հիշեցնում է իր փառավոր անցյալը, երբ ինքը «շքեղազարդ հարսի պես» փախչում էր իր ափերից, երբ Հայաստանը հզոր պետություն էր, ուներ շեն քաղաքներ ու գյուղեր, երբ իր որդիները՝ «ծարավ, նոթի, անտերուչ», չէին դեգերում օտար ափերում, երբ Հայաստանում չէին իշխում օտարները, երբ այն «հնացած ձորձի նման» չէր կիսվել օտարներից, ինքը « հազար ու բյուր պչրանքով» փախչում էր իր ափերից, և ինքը միշտ սգվոր կլինի՝

- Քանի որ իմ զավակունք

Այսպես կու մնան պանդուխտ՝

Ինձ միշտ սգվոր կը տեսնեք,

Այս է անխախտ իմ սուրբ ուխտ...

Բանաստեղծությունը արձագանքն է հայ ժողովրդի կոտորածների, որ իրականացնում էր թուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանում, և ցարական կառավարության հայահալած քաղաքականության:

«Իմ ազգակից գիժ Քուռը» Վրաստանն է, որ ստրկորեն կրում է ցարական կառավարության լուծը, իսկ մայր Արաքսը՝ Հայաստանը, միայն հայ «փեսա» է ուզում ունենալ: Ե՛վ բանաստեղծը, և՛ Արաքսը սգավոր են, քանի որ Հայաստանը չունի պետականություն, չունի երբեմնի փառքը...

4. Մասիսը մեր ժողովրդի հավերժության, հարատևության խորհրդանիշն է մեր ժողովրդի գոյության օրվանից: Մեզնից յուրաքանչյուրը իր հոգում ունի ի՛ր Մասիսը և ուզում է այն տեսնել գերությունից ազատված, շղթայազերծ, իր մասնատված հայրենիքին հովանի դարձած: Ամեն առավոտ ես ողջունում եմ իմ սրբազան լեռանը, հարցնում օրվա անցուդարձի մասին: Ես անխախտ հավատ ունեմ, որ մի առավոտ լեռս կանչելու է ինձ, որպեսզի միասին ողջունենք իր զավակներին՝ Սիփանին, Անդոկին, Նեմրուփին, Մարութա սարին, ծիծաղախիտ Վանա ծովակին.....(Այս հարցին ինքդ պիտի պատասխանես, սիրելի՛ աշակերտ):

Հանձնաժողովի նախագահ՝

/Ս. Աբազյան/